

ԶՕՐ. ԼԱՀՈՒՏ ՀԱՄԱՌՈՒՄԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵՑ ԳԱՀԻՐԷԻ ԺՈՂՈՎԻՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Նախագահ ԿՕՐ. Ըմիլ Լահուտ երկէ Պապատայի մէջ ընդունեց արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանացիներու հարցերու նախարար Մահմուտ Համուտը, որուն հետ քննարկեց արտաքին գործոց նախարարներու արտակարգ ժողովին արդիւնքները եւ անկէ բխած պաշտօնական հարցազրուիչները, որ կ'արտայայտէ արաբական միացեալ կեցումը մը շրջանային պարզացումներուն եւ Իրաքի տագնապին նկատմամբ:

Համուտ յայտնեց, որ նախագահ Լահուտի փոխանցած է նաեւ ժողովին մասնակցած Եւրոպական Միութեան պատուիրակութեան հետ ունեցած իր հանդիպումին արդիւնքները, ինչպէս նաեւ Արաբական յառաջիկայ վեհաժողովին կայացման շուրջ կատարուած քննարկումները:

Համուտ ընդգծեց, որ նախագահ Լահուտի փոխանցած է նաեւ Լիբանան - Քուէթ ղիւանագիտական տագնապին մասին տեղեկութիւններ՝ աւելցնելով, որ Քուէթ քոյր երկիր մըն է, որուն հետ Լիբանան կը վայելէ պատմական յարաբերութիւններ:

Նախագահ Լահուտ ընդունեց նաեւ Կրօսաշրջութեան նախարար Քարամ Քարամը, որուն հետ քննարկեց Կրօսաշրջութեան մարպին առնչուած հարցեր եւ նոր ծրագիրներ:

Նախագահ Լահուտի այցելեց Ֆրանսական բարգաւաճման հաստատութեան նախագահ Ժան Միշէլ Սեվերինո, ընկերակցութեամբ Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպան Ֆիլիպ Լը Քուրթիէի:

Հանդիպումին Սեվերինո յայտնեց, որ Ֆրանսա բոլոր պատրաստութիւնները կատարած է «Փարիզ-2» ժողովին Լիբանանի խոստացած իր 500 միլիոն եւրոյի գումարը տրամադրելու համար:

Նախագահական պալատի հիւրերէն դարձան նաեւ Ընկերային Ապահովագրութեան Ազգային Մատուցի ընդհանուր տնօրէն Մոհամէտ Քարաքի, Լիբանանի մէջ Հոլանտայի դեսպան Ժան Փիէ Բիլվէլ տը Չուան եւ Լիբանանի մէջ ԵՈՒՆԵՍԿՅի ներկայացուցիչ Աքրիմ Պիրեթի:

ՓՈԹՈՐԻԿԻՆ ԴԷՄ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներքին գործոց եւ քաղաքացիութեան հարցերու նախարար Էլիաս Մըր երկէ իր գրասենեակին մէջ գլխաւորեց ապահովական ժողովի մը, որուն ներկայ գտնուեցան նախագահական պալատի անդամներու նիստը, որուն ընդհանուր տնօրէն ԿՕՐ. Մարուան Չէյն, ինչպէս նաեւ փոխարտական այլ պատասխանատուներ: Նախարար Մըր հրահանգեց ապահովական բոլոր ուժերը, հրշէջներու խումբերը, քաղաքացիական պաշտպանութեան ուժերը եւ բանակի միաւորները կազմ ու պատրաստ վիճակի մէջ պահել, ընդառաջելու համար քաղաքացիներու պահանջներուն փոթորիկի մը պարագային:

Ներքին գործոց նախարարութեան կեդրոնատեղիին մէջ ստեղծուեցաւ գրասենեակ մը, ուր կրնան դիմել տարբեր շրջաններու մէջ փոթորիկի պահուն օժանդակութեան պէտք ունեցողները. ուել քաղաքացի կրնայ հեռաձայնել 1733 թիւին՝ շտապ օգնութեան համար:

«ԱՆՂՐԱՆԻԿ» ՄԵԼԱՎՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՆ
Ե. Բ. Ը. Ս. Ե. Ե. Ը.
ԵՐԱՃՅԱԿԱՆ ԸՆԴՄԻՋՈՒՄ - 2
«ՀԱՅԿԱԿԱՆ ՕՓԵՐԱՅԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՉԱՐԳԱՅՈՒՄԸ»
Կը ներկայացնէ՝
ԴՈՎՏ. ՆՈՐԱ ՍԱԼՄԱՆԵԱՆ
Հինգշաբթի, 20 Փետրուար 2003, երեկոյեան ժամը 8:00ին, Ե. Բ. Ը. Ս. Տեմիրճեան կեդրոն, 5րդ յարկ:

ՄԱՀԱՉԴ

Տիրար Գէորգ Արմէնեան
Տէր եւ տիկին Կարօ եւ Ալլին Քիւրքեան
Տիրար Ալան Ոսկերիչեան
Տիրար Սարգիս Արմէնեան
Տէր եւ տիկին Օհան եւ Կասիա Արմէնեան
Տէր եւ տիկին Ատուրշան եւ Նորա Արմէնեան
Տէր եւ տիկին Յակոբ եւ Վերենա Սարգիսեան
Տէր եւ տիկին Ջարեհ եւ Ժանէթ Սարգիսեան
Տէր եւ տիկին Ժողովի եւ Մարո Լուսինի
Տէր եւ տիկին Նազիկ եւ Շողիկ Տիմիճեան
եւ համայն ազգականներ կը գոված իրենց կնոջ, մօր, քրոջ, ազգականին եւ հարազատին:

ԳՈՋԷԹ ԱՐՄԵՆԵԱՆԻ

(Ծնեալ՝ ՍԱՐԳԻՍԵԱՆ)

անակնկալ մահը, որ պատահեցաւ Կիրակի, 16 Փետրուար 2003ին, «Հարուն» հիւանդանոցին մէջ:

Յուզարկաւորութեան պաշտամունքը պիտի կատարուի Չորեքշաբթի, 19 Փետրուար, կէսօրէ ետք ժամը 1:00ին, էջրեֆիէի Հայ Աւետարանական եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Ֆրանսայի Երազմէի Հայ Աւետ. գերեզմանատուն:

- Ներկայ ընդունելի իրրեւ մահազոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը Մգհեր, դեղարան «Մգհեր» վրայ, «Եփրեմեան» շէնք, 7րդ յարկ, Չորեքշաբթի 19, Հինգշաբթի 20 եւ Ուրբաթ 21 Փետրուարին, հեռաձայն՝ 04-716488 եւ 03-307321:
- Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւն կատարել էջրեֆիէի Հայ Աւետարանական եկեղեցւոյ:

ԼԻԲԱՆԱՆ - ՔՈՒԷՅԹ ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԱԳՆԱԿ

Լիբանանեւթուէյ-թեան յարաբերութիւնները երկէ թեւակոխեցին տագնապալի հանգրուան մը, երբ Քուէթի արտաքին գործոց նախարարութիւնը իր մօտ կանչեց Քուէթի մէջ Լիբանանի դեսպան Սալէտ Մուսթաֆա Քիլանին, անոր յայտնելու համար Քուէթի պարտքը Գահիրէի մէջ կայացած արաբ արտաքին գործոց նախարարներու ժողովին Լիբանանի կեցումը ղեմ: Միւս կողմէ, Քուէթի խորհրդարանին մէջ շարք մը երեսփոխաններ պահանջեցին տուն կանչել Լիբանանի մէջ Քուէթի դեսպանը իբրեւ բու

ունեցած իր հանդիպումէն ետք: Իսկ պատասխանելով հարցումի մը՝ Քուէթի լիբանանեւթուէյի կարգ մը երեսփոխաններու պահանջին մասին, թէ պէտք է կասեցնել Լիբանանի յատկացումը օժանդակութիւնները եւ տուն կանչել Պէյրութի մէջ Քուէթի դեսպանը, Հարպի ըսաւ, որ Քուէթի խորհրդարանը կը կանչուի ժողովրդավարական կարգերով եւ ամէն ոք ունի խօսքի ապաստութիւնը, սակայն սահկա չի նշանակեր, թէ իրաքանչիւր երեսփոխանի արտայայտութիւնը պաշտօնական կեցումը մըն է:

ՏՈՒՐՔԵՐՈՒ ՄԱՐԶԻՆ ՄԷՋ

ԼԻԲԱՆԱՆ - ԿԻՊՐՈՍ ԸԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ելեւմուտքի նախարար Ֆուատ Մինիորա երկէ կիպրացի իր պաշտօնակիցին՝ Թաքի Բլեթիտիսի հետ ստորագրեց համաձայնագիր մը՝ արգիլելու համար երկու երկիրներուն միջեւ տուրքերու կրկնապատկումը, ինչպէս նաեւ քաջալերելու համար ներդրումները: Մինիորա նկատել տուաւ, որ համաձայնագիրին ստորագրութիւնը կ'իյնայ պանաբանական մարպերու մէջ յարաբերութիւններու ամրապնդման շրջա-

գծէն ներս, ինչպէս նաեւ կը միտի աշխուժացնել երկու երկիրներուն միջեւ առեւտրական եւ կրօնաշրջանային յարաբերութիւնները: Բլեթիտիս դրուատեց Լիբանան - Կիպրոս երկկողմանի ստորագրութիւնները եւ յոյս յայտնեց, որ գործակցութեան համաձայնագիրներ կը ստորագրուին նաեւ տնտեսական եւ գործատէրերու գործակցութեան մարպէն ներս: Անդրադառնալով

ՊԵՐՐԻ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԵՎԵՐԻՆՈՆ

Խորհրդարանի նախագահ Նեպի Պրորի երկէ ընդունեց բարգաւաճման ֆրանսական հաստատութեան նախագահ Ժան Միշէլ Սեվերինոն, որուն կ'ընկերանար Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպան Ֆիլիպ Լը Քուրթիէ: Հանդիպումէն ետք Սեվերինո յայտնեց, որ տեսակցութիւններ պիտի ունենայ նաեւ վարչապետ Ռաֆիք Տարիքի, ելեւմուտքի նախարար Ֆուատ Մինիորայի եւ Կեդրոնական Դրամատան կառավարիչ Ռիատ Սալամէի հետ: Ան ըսաւ, որ իր այցելութիւնը կը հետապնդէ երկու նպատակներ: Առաջինը կը կեդրոնանայ «Փարիզ-2» ժողովին՝ Ֆրանսայի կողմէ Լիբանանի խոստացումը 500 միլիոն եւրոյի յատկացման վրայ, իսկ

Եւտրի Լալի: Հանդիպումին ընկերակցեցան Լիբանան - Բրիտանիա երկկողմանի յարաբերութիւնները. առաջարկուեցաւ կազմել խորհրդարանական լիբանանեւթուէյի միջեւ յարաբերութիւններու սերտացման հեռանկարով:

Պրորի ընդունեց նաեւ երեսփոխան Միշէլ Մըրը, խորհրդարանի փոխ նախագահ Էլի Ֆրայիլի եւ երեսփոխաններ՝ Սասա Տըրուանն ու Ժան Օպէտը:

«ԱՉԳԱԿ»Ի ՖՈՆՏԻՆ

• Առ ի քաջալերանք «Ազգակ»ի կայքէջին սկսելուն Կիպրոսէն տողք. Գասպար Թաշճեան կը նուիրէ 50 տուրք:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Երեսփոխանական Գրասենակը ամէն օր առաւօտեան ժամը 9:00էն կ'ստոր ետք ժամը 5:00 կ'ընդունի դիմումներ՝ հետեւեալ ծառայութիւններուն համար:

- 1) Հիւանդանոցային առողջապահական (ուիզա եւ պետական հիւանդանոցային բուժում):
- 2) Ընկերային Ապահովութեան Ազգային Սնտուկ (Տամո):
- 3) Ծանր եւ երկարատեւ բուժման կարօտ հիւանդութիւններու դեղորայքի ապահովում:
- 4) Գաղթականներու նախարարութեան հետ առնչուող հարցեր:
- 5) Բնակարանային հարցերու նախարարութեան (իւրեմ) դիմումներ:
- 6) Աշխատանքի նախարարութեան հետ առնչուող հարցեր:
- 7) Քաղաքացիութիւններու հետ կապուած հարցեր:
- 8) Ընդհանուր Ապահովութեան Սպասարկութեան (ԱՍՏ) դիմումներ:
- 9) Դատական եւ իրաւաբանական հարցերու մասին խորհրդակցութիւն եւ ցուցմունքներ:

Դիմողները պէտք է ներկայանան «Ճաղոցեան» կեդրոն, երկրորդ յարկ, Երեսփոխանական Գրասենակ եւ կամ նախքան ներկայանալը հեռաձայնել 01 - 259881 եւ 01 - 242582 թիւերուն: Այսուհետեւ ամէն Հինգշաբթի առաւօտեան ժամը 9:00էն 11:00 Երեսփոխանական Գրասենակ ներկայ պիտի ըլլայ Երեսփոխանութեան մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովսէփեան, որ պիտի ընդունի քաղաքացիներուն դիմումը:

ԸՆԿԱԿԱՆ ԵՐԵՏՓՈՒՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԱԿ

ԱԿՆԱՐԿ

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔԸ ԿԸ ՊԱՏԿԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԻՆ

2003ի առաջին իսկ օրէն, Հայաստանի տարածքին նախագահական ընտրապայքարը ծաւալած էր արդէն մեծ թափով: Թեկնածուները ներկայացուցած էին իրենց ծրագիրը (որոնցմէ շատերը սակայն կէս կատար) եւ տարբեր քարոզարշաւներով կ'աշխատէին համոզել ժողովուրդը, որ վերջին հաշուով պիտի ըլլայ միակ վճռողը: Քարոզարշաւի օրերուն, մեր մամուլի էջերէն մենք առօրեայ հետեւողականութեամբ անդրադարձանք բոլոր երեւոյթներուն, կատարեցինք մեր մատնանշումները եւ ըստ այնմ ճշդեցինք մեր կեցումաձքը:

Այսօր պիտի ընտրուի մեր երկրին նոր նախագահը: Եւ որովհետեւ ընդհանրապէս նոր ընտրութիւնը սկսելուով կը կատարուի նախորդ շրջանի գործունէութեան ըստ էութեան քննարկման արդիւնքներուն հիման վրայ, հարկ է, որ կրկնելու գնով անգամ մը եւս ամփոփ ձեւով ներկայացնենք մեր գնահատած արդիւնքը, զոր եկրակացուցած ենք շաբաթներէ ի վեր կատարուող հրապարակային քննարկումներէ ետք: Ըսինք. մեր մամուլը բազմիցս արտայայտուեցաւ Հայաստանի նախագահական ընտրութիւններուն մասին եւ անցնող հնգամեակի գործունէութիւնը առարկայականօրէն քննարկելէ ետք, բացթողումներն ու յաջողութիւնները կ'ընդգծէ ետք յանգեցաւ աւելի դրական եկրակացութեան քան ժխտական, առաւելաբար հիմնուելով արտաքին քաղաքականութեան վրայ, ու մանաւանդ մեկնելով համապայլծակի հիմնահարցերէ: Եւ որովհետեւ այսօրուան ութ թեկնածուներուն մէջ այդ իմաստով Ռոպէրթ Քոչարեան անկապակած կը գրաւէ առաջին դիրքը, ապա մենք խղճի ամենայն հանգրստութեամբ կը պաշտպանենք անոր թեկնածութիւնը եւ մեր վստահութեան քուէն կու տանք իրեն, իսկ հայրենի մեր ժողովուրդը իր վճռորոշ քուէով չի վարանալ մանաւանդ վերջնական համաձայնական տուեալներով օժտուած նախագահ Քոչարեանը:

Վստահաբար այսօր առաւօտեան կանուխ ժամերէն սկսեալ ու մինչեւ երեկոյ, մայր հողին վրայ ապրող մեր հայրենակիցները՝ անտեսելով օդերեւութաբանական աննպաստ պայմանները՝ խիտ, քաղաքակիրթ ու գիտակից շարքերով պիտի ուղղուին քուէատուփ, ամենայն թափանցիկութեամբ կատարեն քաղաքացիական իրենց պարտաւորութիւնը եւ միաժամանակ տէր կանգնին իրենց «սրբապան» իրաւունքին՝ քուէին, ի խնդիր պայծառ ապագայի, բարգաւաճ, կայուն ժողովրդավար ու հպօր հայրենիքի, որ պիտի հանդիսանայ անոր ու հաստատ հիմնաքարը Ամբողջական Հայաստանին:

ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. թ. Փետրուարի 19ին կայանալիք Հայաստանի Հանրապետութեան նախագահի ընտրութիւններին առնչութեամբ, Լիբանանում ՀՀ դեսպանութիւնը յիշեցնում է, որ Լիբանանում բնակուող կամ գտնուող, ընտրական իրաւունք ունեցող Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները, որոնք առ այսօր յայտ չեն ներկայացրել ընտրողների ցուցակներում ընդգրկուելու համար, կարող են մասնակցել ընտրութիւններին՝ ընդգրկուելով լրացուցիչ ցուցակներում:

Դեսպանութիւնը նաեւ տեղեկացնում է, որ ընտրութիւնների օրը Պուրճ Համուտի քաղաքապետարանի հրապարակից ժամը 13:00ից մինչեւ 19:00 կը կատարուի ընտրողների անվճար փոխադրում ՀՀ դեսպանութիւն:

ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ԸՆԿԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Հայ Կաթողիկէ

ՄԵՍՐՈՊԵԱՆ

Արուեստից Վարժարան

Բացում Գ. երկամսեակի

Անգլերէն եւ Օտար Լեզուներ Համակարգիչ Դիմայարդարում սկիզբը՝ 24 Փետրուար, 2003

Համակարգիչի տիւ դասընթացը՝ ամսական միայն 25 հազար լ.ո.

260504
www.mesrobian.com

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Երեսփոխանական Գրասենակը ամէն օր առաւօտեան ժամը 9:00էն կ'ստոր ետք ժամը 5:00 կ'ընդունի դիմումներ՝ հետեւեալ ծառայութիւններուն համար:

- 1) Հիւանդանոցային առողջապահական (ուիզա եւ պետական հիւանդանոցային բուժում):
- 2) Ընկերային Ապահովութեան Ազգային Սնտուկ (Տամո):
- 3) Ծանր եւ երկարատեւ բուժման կարօտ հիւանդութիւններու դեղորայքի ապահովում:
- 4) Գաղթականներու նախարարութեան հետ առնչուող հարցեր:
- 5) Բնակարանային հարցերու նախարարութեան (իւրեմ) դիմումներ:
- 6) Աշխատանքի նախարարութեան հետ առնչուող հարցեր:
- 7) Քաղաքացիութիւններու հետ կապուած հարցեր:
- 8) Ընդհանուր Ապահովութեան Սպասարկութեան (ԱՍՏ) դիմումներ:
- 9) Դատական եւ իրաւաբանական հարցերու մասին խորհրդակցութիւն եւ ցուցմունքներ:

Դիմողները պէտք է ներկայանան «Ճաղոցեան» կեդրոն, երկրորդ յարկ, Երեսփոխանական Գրասենակ եւ կամ նախքան ներկայանալը հեռաձայնել 01 - 259881 եւ 01 - 242582 թիւերուն: Այսուհետեւ ամէն Հինգշաբթի առաւօտեան ժամը 9:00էն 11:00 Երեսփոխանական Գրասենակ ներկայ պիտի ըլլայ Երեսփոխանութեան մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովսէփեան, որ պիտի ընդունի քաղաքացիներուն դիմումը:

ԸՆԿԱԿԱՆ ԵՐԵՏՓՈՒՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒՔԻՆԵՐ



Փետրուար 19ին Հայաստանի նախագահական, ապա նաև Մայիս 25ին կայանալիք երեսփոխանական ընտրությունները համահայկական հարցեր են, եւ, այդ առումով, կը շահագրգռեն հայրենիքի թէ արտերկրի մէջ գործող բոլոր կուսակցութիւններն ու համայն հայութիւնը:

Ընտրութիւններուն կայուն, օրինական, ազատ, արդար եւ ժողովրդավար սկզբունքներով կայացումն ալ անհրաժեշտ է ներկայ քաղաքական հանգրուանին՝ Հայաստանի դեպի ժողովրդավար կարգեր ու պետականութեան ամրացում իր երբէք ամբողջացնելու հիգիւն, դերին ու առաքելութեան որոշակի առաւելագոյն փաստը հարթելու եւ ձեւաւորելու էական ազդեցութեան ի խնդիր:

Հայաստանը ներկայիս կը գտնուի Հանրապետութեան նախագահի հերթական ընտրութեան շեմին: Նախընտրական պայքարն ալ առիթ կու տայ, որ տարբեր քաղաքական ուժեր յստակացնեն իրենց արժեքային ծրագրերն ու հենարաններն ու դիրքորոշումները:

Քուեարկութիւնն ու ընտրութիւնը իւրաքանչիւր քաղաքացիի ժողովրդավարական իրաւունք է, իսկ թեկնածուներուն համար հսկայական պատասխանատուութիւն՝ պետութեան եւ ժողովուրդին հանդէպ:

1998ին Հայաստանի իշխանափոխութեամբ հիմը դրուեցաւ պետական քաղաքականութեան նոր ուղի-գիծի մը: Պետութեան ներքին եւ արտաքին ոլորտներուն մէջ ազգային-պետական արժեքներէ ու սկզբունքներէ թելադրուած նոր առաջադրանքներ որդեգրուեցան միջազգային ասպարեզին մէջ՝ արտաքին հաւասարակշռուած նոր քաղաքականութեան մը դրսեւորումով եւ մեր հիմնահարցերը արժանապատիւ կերպով արձարծելով ազգային շահերէ բխող եւ գանձեր պետական քաղաքականութեան քաղաքական վերածելով:

Իշխանափոխութեամբ երկրին դեկը ստանձնած նախագահ Ռոպէրթ Քոչարեանը երկրի կայունութեան պահպանման ի խնդիր նախաձեռնութիւններ ստանձնեց հայրենաբնակ ժողովուրդը ոյրերգական ցնցումներէ գերծ կացուցելու համար: Զուգահեռաբար՝ քաղաքական եւ կառավարման համակարգերու բարեփոխման ուղղուած ժողովրդավարացման գործընթացը ապահովելով քաղաքացիական հասարակութեան մէջ ձեւաւորուեցաւ վստահութեան յոյս, իսկ տնտեսութեան մէջ կատարուած տեղաշարժը, աշխատատեղերու յանելումը, բնակչութեան եկամտի համեմատական անը, Ադրի Գոտիի վերականգնումը, ընկերային ծայր աստիճան լարուած վիճակի բարելաման նախաշնչաները, շինարարութեան ծաւալներու բափր, աղբատուրեան յարգահարման որոշակի քայլերը նոր իրականութեան մը

յոյսը ներշնչեցին: Այսօր տնտեսութիւնը, թէեւ դանդաղ, բայց յարաճուն զարգացման մէջ է:

Այսուհանդերձ, ընկերային-տնտեսական արդար հասարակութիւն ստեղծելու ասպարեզին մէջ արդիւնքները անբաւարար են, քատրային եւ իրաւական համակարգերու բարեփոխման հարցերու մէջ անհրաժեշտ վճարակաւորութիւն ցուցաբերուած չէ, ստուերային տնտեսութիւնը, կաշառակերութիւնը, տնտեսական սնի արդիւնքները արդար ձեւով վերաբաշխելու գծով գոյութիւն ունեցող բեւեռացումը նուազեցնելու կարգաւորուած աշխատանք պէտք է տարուի: Անշուշտ որ Քոչարեանի գործունեութեան արդիւնաւետութիւնը խոչընդոտող շարք մը առարկայական եւ ենթակայական պատճառներ կան, որոնք ժառանգուած ու սերտահած են Լեւոն Տէր Պետրոսեանի իշխանութեան թաւանուած ու կազմալուծուած վարչատնտեսական համակարգի, ներքաղաքական ու արտաքին տնտեսական գործընթացներու բացասական ազդեցութեան պատճառով:

Վերոյիշեալ փաստարկումները նկատի ունենալով է, որ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը քաղաքական համագործակցութիւններու իրրեւ հիմը ընդունելով ազգային շահերու առաջահերթութիւնը որոշած է պաշտպանել Ռոպէրթ Քոչարեանի նախագահական թեկնածութիւնը՝ ծրագրային ու գաղափարա-քաղաքական սկզբունքներով, որպէսզի պետականութեան եւ ժողովուրդի վաղուան օրը ձեւաւորուի ու նպաստաւոր պայմաններ ստեղծուին յառաջիկայ հինգ տարիներուն հայրենիքը հզօրացնելու համար:

Առանձին կարեւորութեամբ պէտք է արձագրքել, որ Ռոպէրթ Քոչարեանի ընտրանքներն ու կեցածըները մեծ չափով կը համընկնին Հ. Յ. Դ. ի, այլեւ հայրենի թէ արտերկրի մեր ժողովուրդի կեցածըներուն, ինչպէս Արցախի հարցի լուծման բանակցային գործընթացը, Զուախրի հայութեան ընկեյ-ային-տնտեսական ծանր վիճակի բարելաման հետապնդումը, Հայաստան-Սփիւոք յարաբերութիւններու ամրապնդման քայլերը, Հայ Դատի, հայկական պահանջատիրութեան եւ Յեղասպանութեան նախաձեռնողութեան ազգային ուղղուածութիւնը: Իսկ Հոկտեմբեր 27ին ետը Հայաստանի քաղաքական կայունութիւնը, ցնցումային իրավիճակը ձեւաւորեց կերպով հակակշռուեցան Քոչարեանի դեկավարման շնորհիւ:

Հայաստանն ու հայութիւնը կանգնած են իսկապէս լուրջ ընտրանքի առջեւ: Յառաջիկայ ընտրութիւնները պիտի ձեւաւորեն երկրի եւ ժողովուրդի ապագան, պատասխանատուութեան մը:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ԱԶԱՏ ՕՐ»Ի

Այսօր Հայաստանի մէջ տեղի պիտի ունենան նախագահական ընտրութիւններ: Ուր թեկնածուներ կը պայքարին երկրին բարձրագոյն պաշտօնին համար, մինչ ընտրելու իրաւունք ունեցող քաղաքացիներուն թիւը կը կազմէ 2,295,300 (նախորդ ընտրութիւններուն՝ 2 միլիոն 235 հազար): Ընտրութիւններուն հետեւելու համար իրենց դէտերն ու պատուիրակութիւնները Հայաստան ուղարկած են ԵԱՀԿը, Եւրոպական Խոր-

հուրը, ԱՊՀԸ եւ միջազգային կազմակերպութիւններ: Նոյն առաքելութեամբ պիտի զբաղին նաեւ բազմաթիւ տեղական կազմակերպութիւններ:

Ընտրութիւններուն յաղթական կը նկատուի այն թեկնածուն, որ կը ստանայ բոլորէրու պարզ մեծամասնութիւնը, այսինքն՝ 50 առ հարիւրէն աւելին: Հակառակ պարագային, տեղի կ'ունենայ ընտրութիւններու երկրորդ փուլ մը, երկու շաբաթ ետը,



ՀԱՄԱԲԵՐԵՂ ԹԷ ՉՀԱՄԱԲԵՐԵԼ


Եղերաբախտ Տիգրան Նաղդալեանի հրապարակ նետած կարգախօսն էր՝ «Մի քիչ էլ համբերեմք, ամէն ինչ լաւ կը լինի»:

Այսօր այդ կարգախօսին հաւատացողներու, կամ զայն պարզապէս գործող իշխանութեան կողմէ իր աթոռը պահպանելու նպատակով մէջտեղ նետուած քարոզչական խաղ նկատողներու քանակական յարաբերակցութիւնն է, որ պիտի յստականայ:

Գործող նախագահի ընտրապայքարի քարոզչութեան հիմքն ալ, գրեթէ նոյն կարգախօսն էր. առաջին հնգամեակին հնարաւորինս գործ կատարուած է, որ կ'արդարացնէ երկրորդ առիթ մըն ալ ստանալու նախագահ Ռոպէրթ Քոչարեանի եւ իր դաշնակիցներու ակնկալութիւնը, որպէսզի նախ առաւել մեծ ծաւալներով շարունակուին աշխատանքները ու առաւել մեծ թիւով մարդիկ ընդգրկուին իրենց կեանքի պայմանները շօշափելիօրէն բարելաւողներու շարքերուն մէջ:

Համբերողները, որոնք պիտի քուէարկեն նախագահի օգտին, առաջին հերթին այն խաւէն պիտի գան, որ դոյզն իսկ չափով գոնէ զգացած են տնտեսութեան շարժի բարիքները: Խոստումները, նոյնիսկ հարեւաններու բարգաւաճման փաստը դիտար թէ համոզիչ նկատուին վերջին տարիներուն թշուառութեան ճիրաններուն մէջ բռնուած ու անոնցմէ ազատուելու յոյսը արդէն կորսնցուցած մարդոց:

Համբերող ու նախագահին երկրորդ առիթ տալու տրամադիր կրնան ըլլալ անոնք, որ վերջին հինգ



դէմ պայքարին վրայ, նպատակասլացութիւն պիտի մտցնէ պետութեան բարձրագոյն պաշտօնեաները նշանակելու գործընթացին մէջ, յստակօրէն պատգամելով իր անհանդուրժողութիւնը պետական համակարգը կրճող այդ յոռեգոյն երեւոյթին հանդէպ:

Երկրին տնտեսական վերելքը, ժողովուրդին բարոյանոգեբանական վիճակի բարելաւումը, ըստ ին-

ծի, կախեալ է այս ցաւոտ խնդիրին լուծումէն: Ժողովուրդը իր ապագային հանդէպ կրնայ լաւատես ըլլալ միայն եթէ հաւատայ, որ պիտի ազատագրուի կաշառակեր, աւելի ճիշդը՝ իր հոգին ուսող պաշտօնեաներու քանակէն, ու պիտի ունենայ պետութիւն, որ հաւատարիմ ըլլալով իր կոչումին, պիտի աշխատի իր իրաքանչիւր քաղաքացիին համար զարգացման ու յառաջդիմութեան հաւասար առիթ ստեղծել: Միայն այդ առեւ է, որ այսօրուան թշուառ կրնայ դատապարտուած չզգալ ինքզինքն ու համբերել այնքան, որ անհրաժեշտ է, այնքան, որ կարելի ըլլայ յաղթահարել երկրին առջեւ ծառայող առարկայական խոչընդոտները:

Կրցա՞ւ նախագահ Քոչարեան իր ընտրաքաղաքի ընթացքին, Հանրապետութեան տարածքին գրեթէ ամէն համայնք այցելութեան իր հելքին մէջ այն վստահութիւնը ներշնչել քուէարկողներուն: Կրցա՞ւ անոնց մէջ կոտրել անցեալի դառնագոյն փորձառութեանց շնորհիւ արմատաւորուած կասկածը՝ իշխանաւորներու անշահախնդրութեան ու ժողովրդաւնորդութեան հանդէպ: Հասկնալի է, թէ նախագահին որքան դժուար պիտի ըլլար այդ հաւատքը ներշնչել իր ընտրողներուն, երբ գիւղացի ու քաղաքացի քուէարկողը նախագահ - թեկնածուն կը տեսնէ սակաւին շրջապատուած նոյն պաշտօնեաներով:

Ի՞նչպէս կարելի է արդարացնել այդ շրջապատը, այն ալ լուելեայն:

Ի՞նչպէս համոզել, առանց բացայայտօրէն այդ մասին խօսելով, որ այս հանգրուանին անոնցմէ ձեռքազատիլը կը վստահէ իր ընտրութիւնը, այսինքն, իր լաւագոյն մտադրութեանց իրականացման հնարաւորութիւնը, որովհետեւ ընտրական մեքենան, դժբախտաբար, կարելի չէ շարժել առանց այդ պաշտօնատարներու օժանդակութեան եւ հետեւաբար, այս անգամ ալ, բայց արդէն վերջին անգամ, տուրք կը տրուի այդ անցանկալիներուն:

Ես համոզուած եմ, ու իմ համոզումս չի բխիր սոսկ այդ զգայնութիւններէ, այլ՝ գործող նախագահին աշխատանքի արդիւնքի գնահատումէն, հանրապետութեան դիմագրաւած խնդիրներու լուծման ի խնդիր իր հետեւողական ճիգէն, գանձը յաղթահարելու իր վճռակալութեանէն:

Կ'արժէ համբերել: Մանաւանդ որ չհամբերելով կրնանք կորսնցնել նոյնիսկ ձեռք բերուածը:



տարիներուն պետական պաշտօնեաներու կամայականութիւններուն ու չարաշահումներուն զոհ գացած չեն: Միւս խումբը, անոնք, որոնք յաճախ դէմ յանդիման եկած են կաշառակեր «չինովնիկ»ներու, անշուշտ աւելի մեծաթիւ է: Այս խումբէն գործող նախագահին կրնան քուէ տալ անոնք, որ պիտի հաւատան՝ թէ Քոչարեան երկրորդ եւ վերջին անգամ այդ բարձրագոյն աթոռին նստելու պատիւը եթէ ստանայ, հայոց պատմութեան մէջ իր արժանաւոր տեղը պիտի փորձէ ամրագրել բեկումնային փոփոխութիւն բերելով մասնաւորաբար այս մարզին մէջ, արմատականօրէն մաքրելով պետական կառոյցը մակարոյծ պաշտօնատարներէն:

Ես հաւատացողներէն եմ, որ այդպէս ալ պիտի ըլլայ. թեկնածու Քոչարեանը, իր նախագահութեան երկրորդ շրջանին, եթէ ժողովուրդին քուէով ստանայ այդ հնարաւորութիւնը, իր ուժերը, ճիգն ու եռանդը պիտի կեղորոնացնէ կաշառակերութեան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՍՕՐ ՆԱԽԱԳԱՀ Կ'ԸՆՏՐԷ

Ընտրապայքար տեղի ունեցավ եւ, անկեղծօրէն, բազմաթիւ երկիրներ կրճակեցին Հայաստանի: Թեկնածուները անարգել բազմացան, ըսին նաեւ դառն ու կծու խօսքեր, եւ ոչ ոք զիրենք անհանգստացուց: Քանի մը անտեղի եւ ոչ մէկ բանի օգտակար բռնարարներ ստուեր ձգեցին ընդհանրապէս ազատ ընտրապայքարին վրայ: Բարիկամեցողութեամբ գանձեր կ'արձանագրեց ժողովրդավարութիւն ստրկելու ճամբուն վրայ գործուած սխալներու սխեմային մէջ, գորս սրբագրելով յառաջ կարելի է երթալ:

Ստեղծուած է մտայնացման բազմազան ընտրութեան եւ Հայաստանի պատկերը արտաքին աշխարհին առջեւ մեծապէս կը բարելաւուի, եթէ ղեկավարները, բոլոր կողմերու, ազատ ասպարէզ չտան իրենց կիրքերուն եւ մեծ մրցակցութեան պարկեշտ ոլորտի մէջ, մանաւանդ այսօր, երբ կը փակուին բուեարկութեան կեղծոցներու դռները, եւ վաղը, երբ կը յայտարարուի, գրեթէ ամբողջութեամբ կամ մասամբ, ընտրութեան արդիւնքը: Առանց դոյզն կասկածի փոխան, որ առարկութիւններ պիտի ըլլան, որոնք իմաստ պիտի ունենան, եթէ զանազան դէտեր, որոնք շարքերէն ի վեր Հայաստան կը գտնուին, հաստատեն զանոնք:

Որքան կարելի էր, հետեւեցանք ընտրապայքարին: Երեւանեան ղեկավարութիւնը տեղափոխուեցաւ մարզերը, քաղաք եւ զիւղեր, խօսելու եւ մանաւանդ լսելու համար, որովհետեւ գաւառական շրջաններու մարզիկ, լուծ մեծամասնութիւնը, կարծիք յայտնելու առիթ բացաւ չունելին: Անոնց մտահոգութիւնները չեն առնչուիլ երեւանեան մրցակցութիւններուն եւ քաղաքական խաղերուն: Յանկալի պիտի ըլլար, որ բոլոր քաղաքական ուժերը, նախագահ, վարչապետ, նախարարներ եւ Ազգային ժողով, չմոռնային ըստառը, տրտուեցը, ոռոգման ջուրի դժուարութիւն ունեցող եւ նախապահներու անբարարութեան տառապող գիւղացիներու: Ժիշդ է որ Երեւանը Հայաստանի եւ հայութեան հայելին է, բայց Արագածոտնի, Գեղարքունիքի, Տիրակի, եւ բոլոր միւս մարզերու գիւղերը եւ Հայաստան են: Որպէսզի անոնք մեծ իբրեւ ապրող Հայաստան, նոյնքան ուշադրութեան առարկայ պետք է ըլլան, որքան Երեւանը, անոնցմով է որ հորբնակուած հայրենիք է:

Գիւղացիութիւնը յոյսեր կը կապէ Ստեփան Դեմիրճեանի: Ռոպերթ Քոչարեան գիւղացիներու հետ հանդիպումներու ժամանակ խոստումներ ըրաւ շեշտելով, որ կարելի է քաղաքականութիւնը կը վարէ:

Գիւղացիութիւնը յոյսեր կը կապէ Ստեփան Դեմիրճեանի: Ռոպերթ Քոչարեան գիւղացիներու հետ հանդիպումներու ժամանակ խոստումներ ըրաւ շեշտելով, որ կարելի է քաղաքականութիւնը կը վարէ:

Գիւղացիութիւնը յոյսեր կը կապէ Ստեփան Դեմիրճեանի: Ռոպերթ Քոչարեան գիւղացիներու հետ հանդիպումներու ժամանակ խոստումներ ըրաւ շեշտելով, որ կարելի է քաղաքականութիւնը կը վարէ:

Յ. ՊԱԼԵԱՆ

Ժ. 3.

իրենց կուսակցութիւններուն կողմէ: Ստեփան Դեմիրճեան՝ Հայաստանի Ժողովրդական Կուսակցութիւն, Արտաշէ Գեղամեան՝ Ազգային Սիւրբաբութիւն Կուսակցութիւն, Ռուբէն Աւագեան՝ Սիւրբաբութիւն Հայեր, Վազգէ Մանուկեան՝ Ազգային Ժողովրդավարական Սիւրբութիւն, Գառնիկ Մարգարեան՝ Հայրենիք եւ Պատիւ Կուսակցութիւն, Արամ Յարութեան՝ Ազգային Համալսարան:

որուն կը մասնակցին առաւելագոյն քուէները ապահոված առաջին երկու քեկնածուները: Այսօր տեղի ունեցող Հայաստանի նախագահական ընտրութիւններուն քեկնածուներն երկուքը՝ Հայաստանի գործող նախագահ Ռոպերթ Քոչարեան եւ «Ընդունակ» Ռազմավարական Կեղծոցի տնօրէն Արամ Կարապետեան առաջադրուած են քաղաքացիական նախաձեռնութեամբ: Մնացեալ 6 քեկնածուները առաջադրուած են



ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՔԱՌՈՒՂԻՒՆ ՎՐԱՅ

Հինգ տարիներ անցած են արդէն այն օրէն, երբ Հայաստանեանկ մեր ժողովուրդը՝ անսարկ ազգային գաղափարախօսութեան կանչներուն, իր պետական տունը կերտելու ճամբուն վրայ կտրուկ շրջադարձ մը կատարեց, մերժելով նախապէս որդեգրուած ապագային ուղեգիծը:

1998 Փետրուարին տեղի ունեցած իշխանափոխութեամբ, Հայ ժողովուրդը՝ իր քաղաքական երանգապակը ներկայացնող հիմնական շերտերով, եկան բարձրաձայն ըսելու, որ Հայաստանի հզօրութիւնը իր տկարութեան մէջ չէ, որ Արցախի մէջ արեւմտ ձեռք ձգուածը կարելի չէ բանակցութեանց սեղանին վրայ գրիչի շարժումով մը գրելի, որ սփռուած հայութիւնը «Նարինջ ուտողներ»ու հաւաքականութիւն մը չէ, այլ՝ մէկ ու ամբողջական ժողովուրդի մը անբաժանելի մասնիկն է, հայրենիքի քաղաքական, տնտեսական եւ ընկերային հզօրացման եւ բարգաւաճման համար պայքարող հաւաքականութիւն մը:

Այն ժամանակ Հայաստանեանկ մեր ժողովուրդը ճիշդ ընտրութիւն կատարեց, որովհետեւ իր մտքով վրայ գրացած էր նախորդ տարիներու գրկանքներուն դառն ցար: Ուժանդատի ճգնաժամ, «ագատ շուկայ»ի յարաբերութիւններուն որդեգրման կարգախօսին քողին տակ տեղի ունեցած հայրենի տնտեսութեան թալան, լաւ չսերտուած սեփականաշնորհման քաղաքականութիւն մը, որ տարիներու տեւողութեան ստեղծուած ազգային հարստութեան մը կորստեան պատճառ դարձան, ընկերային ծանր երկփեղկուած, արտագաղթ, ժողովրդավարական արժեքներու ու մարդկային իրաւանց տանհարուստ: Այս բոլորը կը ներկայացնեն «Նախաճաշակ» մը այն մթնոլորտին, որ կը տիրէր Հայաստանի մէջ ՀՀՇԿԿ-ի տիրաճակին եւ ապագային իշխանութեան օրով, եւ որուն ազդեցութիւնը մինչեւ հիմա զգալի է հայրենի քաղաքական եւ հասարակական կեանքին մէջ:

Միայն «մուծի տարիներ»ուն դառնութիւնը չճշակած մարդիկն են, որ չեն կրնար հասկնալ 1998ի իշխանափոխութիւնը անհրաժեշտութիւնը Հայ ժողովուրդի կեանքին մէջ...

Այս բոլորէն բացի կար նաեւ ազգային հարց. Լեռնային Ղարաբաղի ազատագրական պայքարը, որուն համար Հայ ժողովուրդը մեծ զոհողութիւններ յանձն առաւ:


Հայութիւնը երբեք չէր կրնար ընդունիլ իր զոհողութիւններուն գնով Ղարաբաղի մէջ ձեռք բերուած զինուորական յաղթանակը գրչի մէկ հարուածով պարտութեան վերածելու ընտրանքը: Պէտք էր որ՝ երբեք այնպիսի քաղաքական ուղիներ չհայտնուէին, որ պատերազմի դաշտին վրայ ձեռք բերուած այդ յաղթանակը ամրագրուէր նաեւ դիւանագիտական յաղթանակով:

Փաստօրէն, ուրեմն, Հայութիւնը կրցաւ տէրը մնալ իր ազգային ընտրանքներուն: Հայաստանի նախկին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան իր «Պատերազմ, թէ խաղաղութիւն» լրջանալու պահը» ծրագրային յօդուածով արդէն իսկ շատ բան բացատրեց իր իրական դիմագիծին: Եւ ոեւէ մէկը, որ հետեւած է այդ ժամանակաշրջանի քաղաքական իրադարձութիւններուն, կրնայ լաւապէս հաստատել, թէ զլիւսաբարբար զարարողեան տագնապի լուծման ձեւերուն եւ տարբերակներուն շուրջ ծաւալած բանավէճը պատճառ դարձաւ իշխանափոխութեան գործընթացի արագացման:

Այսօր դարձեալ ազգովին կը գտնուինք ընտրութիւն կատարելու, ճիշդ ընտրութիւն կատարելու ճակատագրի խաղին: Անցնող հինգ տարիներուն ընթացքին, իշխանափոխութեան բովէն անցած Հայաստանն ու Հայութիւնը ակնատես դարձան քաղաքական լուրջ ցնցումներու, բայց նաեւ տեղի ունեցան զրակաւ իրադարձութիւններ, որոնք երկրին եւ ժողովուրդին յոյս կը ներշնչեն գալիք օրերուն գծով:

Արդի Հայաստանի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, երկրին ղեկավարը ՄԱԿի ամպիոնէն կը խօսէր Հայկական Յեղասպանութեան միջազգային ճանաչման անհրաժեշտութեան մասին: Բազմիցս կը յայտարարուէր, որ «Հայ Դատ»ի հասկացողութիւնը մաս կը կազմէ Հայաստանի արտաքին քաղաքականութեան, կ'ընդունէր սփռուած հայութեան Հայաստանի քաղաքացիութիւն ստանալու գէթ իրաւունքը, հայրենի տնտեսութեան եւ արդիւնաբերութեան մէջ զգալի աճ կ'արձանագրուէր:

Այս բոլոր տեղի ունեցան ո՛չ թէ «մուծի տարիներ»ուն, այլ վերջին քանի մը տարիներուն ընթացքին: Հայաստանի որդեգրած նոր ուղեգիծը օտար եւ



սփռուած հայ զործարար շրջանակներուն մօտ վստահութիւն ներշնչեց իրեն նկատմամբ: Ասոր արդիւնքն էր «Լինսի» Հիմնադրամիսն հետ ստորագրուած ներդրումային ծրագիրներուն իրագործումը Հայաստանի մէջ: Ասոր արդիւնքն էր բազմաթիւ ճամբաներու, մշակութային օճախներու եւ ենթակառուցներու վերանորոգումը: Ասոր արդիւնքն էր մայրաքաղաք Երեւանի համար յատուկ կարեւորութիւն ունեցող Հիւսիսային մայրուղիի հիմնադրամիսն վերակառուցումը: Ասոր արդիւնքն էր գեո 1970ական թուականներէն ծրագրուած Դաւիթբաշէի կամուրջի շինարարութեան ամբողջական աւարտը:

Տակաւին չխօսինք Աղէտի գօտիի վերականգնման ծրագիրներուն մասին, որոնց անարտ կը նախատեսուի այս տարուան վերջնականութեան:

Այո՛, խոստումնային է Հայաստանի ապագան, հակառակ նաեւ վերջին տարիներու գոյութիւն ունեցող ժխտական երեւոյթներու: Բայց որեւէ քաղաքական երեւոյթ գնահատելու համար պէտք է առնել միայն անոր բացասական կողմերը, այլ պէտք է լուսարձակները սփռել նաեւ անոր դրական կողմերուն վրայ, եւ այս միտքի ճշմարտացիութիւնը հաստատելու համար բերեց պարզ օրինակ մը. նախկին իշխանութիւններուն ժամանակ խախտելով ամենադոյզն ժողովրդավարական եւ մարդկային իրաւունքները, կը կասեցուէր կուսակցութիւններու եւ միութիւններու գործունէութիւնը, թերթեր կը փակէին իրենց դռները, բանտներ կը լեցուէին քաղաքական բանտարկեալներով: Այսօր, բարեբախտաբար, այս բոլորը չբացած են:

Այսօր, դարձեալ ազգովին կը գտնուինք մեր ճիշդ ընտրութիւնը կատարելու ճամբուն վրայ: Մեզի համար 1998ի իշխանափոխութեան ուղին շարունակելէ բացի այլ ընտրանք չկա:

ՊԻՏԻ ՏԵՄԵՆՔ ԳԱՀԻՆ ՆՍՏԱԾ ՀԱՅ ԻՇԽԱՆ

Հայաստանի մէջ այսօր տեղի պիտի ունենայ շրջանային թէ միջազգային շատ մը լուսարձակներ իր վրայ հրաւիրանք նախագահական ընտրութիւնը: Վերանկախ Հայաստանի քաղաքացիները արդէն ըլլալով պիտի ընտրէ Հայաստանի նախագահ մը: Լրջագոյն պատասխանատուութեան հերթական պահն է Հայաստանի քաղաքացիին համար, որ ինչպէս նախորդ ընտրութիւններուն, այս անգամ եւս կը փայտապէս այն յոյսը, թէ իր քուէն ստացող թեկնածուն պիտի ընտրուի ու պիտի իրականացընէ ժողովուրդին համար, միաժամանակ արդար երազանքները, պիտի իրագործէ իր յոյսերը: Այս ընտրութիւններուն նախընտրանքն էր անգամ ըլլալով պիտի ընտրուէր Հայաստանի համար աննախընթաց էր իր տեսակին մէջ: Քարոզարարը յամար էր կարգ մը թեկնածուներու մօտ միջոց վերածուեցաւ ցեխարձակման արշաւի: Եւ այլ խոստումներ (անկախ անոր արժեքէն) եւ նորը կառուցելու հա-

կաստիացումներ, ընտանիքի անդամ այլ գործիչի մը «աւանդ»էն ժառանգուած «վարկ»ին վրայ հիմնադրուող երաշխիքներ վարակած էին բազմաթիւ թեկնածուներու նախընտրական ծրագիրները: Այսուհանդերձ բեմահարթակին վրայ այս տակաւն վրայութեան մէջ, իրենէ յետոյ ուղեգիծի չափանիշ որդեգրած կը մնայ մէկ թեկնածու՝ Անոր վերընտրութիւնը առկայ հաւանականութիւններուն մէջ ամէնէն յոյս ներշնչողն է, որովհետեւ ան ներկայացուցիչն է ուղեգիծի մը՝ ազգային ուղեգիծի մը, որ զրոյստուեցաւ 1998ի իշխանափոխութեամբ: Գործող նախագահը յաջողեցաւ մնալ այդ ուղեգիծին վրայ եւ որոշ մարտերու մէջ նաեւ ամբողջապէս գրեց զայն: Գործող նախագահի գործունէութեան յաջողութիւնները, ինչպէսզի Հայկական Յեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացին պետութեան կողմէ որդեգրուած եւ շարունակուած: Լեւոնային Ղարաբաղի բանակցութիւններուն մէջ Հայաստանի քաղաքացիներուն մէջ Հայաստանի ստեղծման եւ տնտեսական կայուն աճի մասին: Ուշագրաւ է նաեւ Աղէտի գօտիի վերացման աշխատանքներու ուղիներ թափուած: Տնտեսական մասկարակի վրայ կը խօսուի տարեկան 35 - 40 հազար աշխատատեղիի ստեղծման եւ տնտեսական կայուն աճի մասին: Ուշագրաւ է նաեւ Աղէտի գօտիի վերացման աշխատանքներու ուղիներ թափուած: Սակայն այս բոլորին կողքին կան նաեւ նոյնքան ակնբախ առարկելի երեւոյթներ՝ Հոկտեմբեր 27ի ոճիւրի յամեցող դատավարութիւնը, քաղաքական սպանութիւնները, մահափորձերը եւ անոնց պատասխանատուներուն անպատասխանութեան երեւոյթը, ցարդ խօսքի սահմաններուն մէջ տուալտող պայքար փոստութեան դէմ, խոստացուած երկրաշարժի տեղիներու դրուածքի պաշտօնական գործադրութիւնը եւ այլ հարցեր, որոնք պէտք է գտած ըլլալին արդէն իսկ բարուք լուծուած:

Լ. Ա.

ՀԱՅ ԵՏՈՒ ԳԵՐԴԱՍՏԱԼՆԵՐ

ՓՐՈՒՆԳՈՒԼԵԱՆՆԵՐԸ՝ ՊԵՏԱԿԱՆ ԶԱՓԱՆԻՇՈՎ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ԵՒ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ

Փրունգուլեան գերդաստանը ժ.թ. դարուն շարունակեց բազմաձև, բարդալուծ և տարածուի Սուլալալյան դուրը՝ դէպի Աստուրիական կայսրութեան եւ Ռուսաստանի տարբեր քաղաքներ, եւ անոնցմէ ընտանիքներ բնակութիւն հաստատեցին Չեռնովիցի, Ֆոքչանի եւ Պոթոլանի մէջ: Փրունգուլեանները ամէնուրեք, ուր որ հաստատուեցան, ազգային հասարակական գործիչներ եւ բարերարներ տուին, իսկ ասպետ Վարդերես ֆոն Փրունգուլ պետական չափանիշով ղեկավար դէմք դարձաւ: Առաջին Աշխարհամարտի աւարտէն ետք Փրունգուլեանները մեծ մասամբ Ռուսաստանի սահմաններուն մէջ մնացին, մինչեւ ներկայ ժամանակները անընդմիջաբար մնալով Սուլալալի հայ հին գաղութի ներկայացուցիչները:

ՓՐՈՒՆԳՈՒԼԵԱՆՆԵՐԸ՝ ԱՒՍՏԻՆՈՅ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐ

Աստուրիական կայսրութեան կազմին մէջ Փրունգուլեանները, իրեն ազնուական տոհմ, մեծ հեղինակութիւն ձեռք ձգեցին: Ֆերտիստիան Ա. կայսեր գահակալութեան ժամանակաշրջանին (1835-1848) Աստուրիա տնտեսական զօրացման քայլերու ձեռնարկեց զարկ տալով ճարտարարուեստին եւ երկրագործութեան ու առևտուրի զարգացման, եւ ձիապահուստները թեւեւ կ'արմարէր ճամբարներ բացուեցան, որոնք կ'երկարէին Դանուբի արեւելք մինչեւ

ստանձնեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ դպրոցին տեսչութիւնը եւ միաժամանակ ստեղծեց աղջկանց վարժարան: Եղիա ֆոն Փրունգուլ եւ Աստուածատուր Ջուրդ պետական հովանաւորութեան ներքեւ կազմակերպեցին կրթական կեանքը: Ջուրդ 1853ին անցաւ Պոլիս, դարձաւ փայտի մեծ վաճառական եւ աւստրիական հումքի միակ ներածողը Արեւելքի մէջ: ստացաւ աւստրիական ազնուականի տիտղոս:

Նոյն ժամանակաշրջանին Գրիգոր Ե կարպետ ֆոն Փրունգուլեաններ Ֆրանց Իոսէֆ Բ. կայսրէն ապետութեան տիտղոս ստացան: Հեղինակաւոր դէմքեր դարձան նաեւ Աւետիք եւ Միքայէլ Փրունգուլեանները:

ԱՍՊԵՏ ԱՐԱՎԱՍ ԵՒ ԱՍՈՒԱԾԱՍՈՐ ՓՐՈՒՆԳՈՒԼԵԱՆՆԵՐ

Արաւաս Փրունգուլեան, ծնած՝ 1803ին, Սուլալալի կայսերական նոտարի պաշտօնը ստանձնեց, զոր վարեց տասնամեակներ շարունակ: բազմամեայ իր ծառայութեան իրեն վարձատրութիւն՝ Ֆրանց Իոսէֆ Բ. կայսր ապետութեան տիտղոս տուաւ անոր: Ան նաեւ գործօն դերակատարութիւն ստանձնեց հայ ազգային ու եկեղեցական կեանքին ներս եւ մինչեւ դարավերջ, խոր ծերութեան մէջ մնաց մշտաբան պահակար հայկական տոհմիկ բարեբու, սրբութիւններու ու սովորութիւններու անխաթար պահպանման: Հին սերունդի վերջին ներկայացուցիչներէն՝ ան աւանդ ձգեց նորահաս սերունդին՝ ըսելով՝

«Սիրելի՛ երիտասարդք, մենք այսքան ծերերս, որ դեռ պիտի չպարհիք այնքան, որ պարբեր ենք, ուստի լաւ նայեցէ դուք, որովհետեւ դուք էք մեր յաջորդքը, եւ մենք ձեզ կը բողոքեմք մեր աստուածատուր լեզու, մեր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բանկ հաւատը, մեր մարտիրոսութեամբ պարծեակեցինք, այս տեղի հաշիւները, մեր կաթնեաց յիշատակներու եւ աւանդութեանց պահպանութիւնը, որով դուք պիտի լինիք մեր հայ ազգութեանը շարունակող այս տեղը: Զեր



Փրունգուլեաններու տոհմական դամբարան Ս. Յարութիւն մատուռը Սուլալալի հայոց գերեզմանատան մէջ

մոլորակական սահման: Այս բոլորը նպաստեցին Պուլքովինայի արագ բարգաւաճման, որուն շնորհիւ Փրունգուլեաններ ընդլայնեցին իրենց առևտրական շուկաները, տնտեսական զարգացման քայլերու ձեռնարկեցին եւ նոր գործառնութիւններ ստանձնեցին:

Այս ժամանակ Փրունգուլեան տան գլխաւոր ներկայացուցիչներն էին՝ Վարդերես, Գրիգոր, Եղիա եւ անոր գաւազակ՝ Գրիգոր (որ 1837ին Սուլալալի Ս. Խաչ եկեղեցւոյ ձեռագիր յիշատակարան ձգած է) եւ Միքայէլ ֆոն Փրունգուլեանը: Անոնցմէ Միքայէլ, որ 1800ին պարոն Գրիգոր ֆոն Գրեբանի դստեր՝ Մարիամի հետ ամուսնացած էր, մեծ հեղինակութիւն ձեռք ձգեց:

Վիեննայի մէջ 13 Մարտ 1848ին ծայր առաւ ժողովրդային յեղափոխական շարժում մը, որ ներշնչուած էր նախորդ ամիս Ֆրանսայի մէջ ծագած յեղափոխութենէն: Յեղափոխութիւնը լայն ծաւալ ստացաւ եւ տարածուեցաւ Հունգարիոյ, Կալիցիոյ, Նորուեթիոյ, Միլանոյի եւ կայսրութեան այլ երկրամասերուն մէջ: Մայիսին խռովութիւնները սաստկացան Վիեննայի մէջ, եւ կառավարութիւնը ազուրկ միջոցներ ձեռք առաւ արգելելու համար գաւառներէն յեղափոխականներու յառաջխաղացքը դէպի մայրաքաղաք: Հոկտեմբերին Վիեննայի յեղափոխականները փակեցին հունգար յեղափոխականներու դէմ ուղղուող կայսերական զօրքին ճանապարհը, մինչեւ որ բանակը 31 Հոկտեմբերին գրաւեց մայրաքաղաքը եւ անխնայ մաքրագործեց յեղափոխութեան ղեկավար դէմքերը: Յեղափոխութեան ճնշման տակ Ֆերտիստիան Ա. 2 Դեկտեմբեր 1848ին հրաժարեցաւ, որմէ ետք գահ բարձրացաւ Ֆրանց Իոսէֆ Բ. (հետագային, 1867ին երկիրը վերանուանուեցաւ իրեն Աւստրիո-հունգարիոյ կայսրութիւն):

Յեղափոխութեան եւ անիշխանութեան այդ օրերուն ֆրանսիականիոյ հայերը զօրավիգ կանգնեցան հունգար յեղափոխականներուն, որուն պատճառով ալ ծանր կորուստներու մեթարկուեցան: Սակայն Պուլքովինայի հայերը մասնակցութիւն չընդունեցին Փրունգուլեանները, իրեն ազնուականներ եւ հայ համայնքի ներկայացուցիչներ, պահեցին իրենց իրաւունքները:

Այս ժամանակներէն ազգային հասարակական գործերու մէջ կարեւոր դերակատարութիւն ստանձնեց Եղիա ֆոն Փրունգուլ, որ միաժամանակ Սուլալալի Ս. Խաչ եկեղեցւոյ քահանայի մէջ գործող (չմիտուած՝ 1824ին) Ս. Գրիգոր Լուսաւորիչ դպրոցին հոգաբարձու եղաւ: Ան իրեն հայրենակից եւ ազգական Աստուածատուր Ջուրդի (որուն մայրը Փրունգուլեան գերդաստանէն էր) գլխաւոր արմատը դարձաւ: Ջուրդը 1850ին Սուլալալ վերադարձաւ Վիեննայի եւ Զմիւռնիոյ Միխիթարեան վարժարաններու ուսման շրջանը աւարտելէն ետք,

բնակութիւն հաստատեց Մոլտաւիոյ եւ Վալախիոյ սահմանին վրայ գտնուող (արեւելեան-կեդրոնական Ռուսաստան) Ֆոքչան քաղաքին մէջ: Ֆոքչան հայ գաղթականութեան հին կեդրոններէն էր, ուր ստուար թիւով հայութիւն կեդրոնացած էր: Փրունգուլեաններ հոն ընդարձակ կալուածներ գնեցին եւ միաժամանակ առևտուրի ձեռնարկեցին, եւ քաղաքին ամենէն երեւելի ու հարուստ ընտանիքներէն դարձան:

Փրունգուլեաններ հիշէն ի վեր կապ ունէին Սուլալալի հիւսիս-արեւելք գտնուող Պոթոլան քաղաքին հետ, որ նոյնպէս հայ գաղթականութեան հին կեդրոններէն եղած է: Ժամանակի ընթացքին հոն բնակութիւն հաստատեցին Փրունգուլեան ընտանիքները:

Աւետիք Փրունգուլեանի կինը՝ Աննա, որ Դաւիթ Կոլլաւեանի դուստրն էր, ամուսնոյն մահէն ետք 1884ին մատուռ մը շինել տուաւ Պոթոլանի հայոց գերեզմանատան մէջ:

Տարբեր քաղաքներ հաստատուած Փրունգուլեանները տարբեր առիթներով կ'այցելէին Սուլալալ՝ իրենց ազգականներուն, յատկապէս՝ Ս. Աստուածածնի տունին, Հաճկատարի վանքի ուխտագնացութեան ժամանակ:

ԱՍՊԵՏ ՎԱՐԴԵՐԵՍ ԳՈՆ ՓՐՈՒՆԳՈՒԼ

Փրունգուլեան գերդաստանին պետական չափանիշով ամենէն կարկառուն դէմքեր դարձաւ ասպետ Կարպետ ֆոն Փրունգուլի գաւազակ՝ Վարդերես: Ան ծնած էր 12 Փետրուար 1859ին, Սուլալալ: Մենդավայրին զիմնագրան աւարտելէն ետք մեկնեցաւ Վիեննա եւ ամբողջացուց համալսարանական իր ուսումը՝ հմտանալով գերմաներէնի, լատիներէնի, ռուսներէնի, հունգարերէնի եւ լեհերէնի մէջ: այնուհետեւ ան Վիեննայի Միխիթարեաններուն մօտ տիրապետեց հայոց լեզուին, գրականութեան, մշակոյթին ու պատմութեան:

Վերադառնալով Սուլալալ՝ ան ստանձնեց

կարելու համար կոտորածներէն տուած հայորդիներուն: իր նախագահութեամբ յանձնարուեալ կազմուեցաւ որբերուն օգնելու համար, եւ իր ծախսով տար պատանիներ թուրքիայէն Աստուրիա փոխադրուեցան եւ ուսում ստացան: Հայ եկեղեցւոյ աւանդութիւններուն ու

սրբութիւններուն հաւատարիմ՝ ասպետ Վարդերես ֆոն Փրունգուլ գործօն դերակատարութիւն ստանձնեց եկեղեցական կեանքէն ներս: 1896ին թաղականութեան նախագահ ընտրուեցաւ: պաշտօն մը, զոր վարեց մինչեւ կեանքին վերջը: Անհաճանք պայքար մղեց դաւանափոխական հոսանքներուն դէմ եւ առիթով մը վունտեց Հոռոմի պապին կողմէ իրեն ներկայացած վարդապետ մը: Միաժամանակ մեծ աշխատանք տարաւ եկեղեցապետական կայուածներու անվթար պահպանման համար: 1902ին Սուլալալի հայոց գերեզմանատան մէջ կառուցել տուաւ Ս. Յարութիւն մատուռը՝ իրեն դամբարան Փրունգուլեան գերդաստանին:

Հմուտ դիւանագէտ, տասնամեակներ շարունակ ան հայութեան ներկայացուցիչն էր պետութեան մօտ: կայսրութեան եւ իր ժողովուրդին մատուցած ծառայութիւններուն համար Ֆրանց Իոսէֆ Բ. կայսր անոր շնորհեց «Երկաթէ պսակ» (Eiserne Krone) շքանշանը: իր անուշով կոչուեցաւ նաեւ Սուլալալի փողոցներէն մէկը:

Կինը՝ Օլիա բարեսիրական լայնածաւալ գործունէութիւն ունեցաւ եւ Սուլալալի Հայ Տիկնանց Միութեան նախագահ ընտրուեցաւ:

Ս. Աստուածածնի տունին, Հաճկատարի վանքի ուխտագնացութիւններուն Փրունգուլ ամուր եզներ ու ոչխարներ գնել տալով՝ աղքատներն ու տարբեր քաղաքներէ հաւաքած ուխտաւորները կը հիւրասիրէր վանքի սեղանատան մէջ, իրեն համեստութիւն իրենք կատարելով սպասարկութիւնը:

Մեծապէս հետաքրքրուած հայկական բարենորոգումներու հարցով, ասպետ Վարդերես

ֆոն Փրունգուլ 1913ին Վիեննայի խորհրդարանին մէջ հանգամանօրէն արծարծեց հայկական հարցը եւ անոր ի նպաստ յուշագիր հաւաքեց եւ յանձնեց կոմս Պերթոլիսի եւ տեղական կարեւոր թերթերուն:

Հայութեան մէջ կրթութիւնը տարածելու համար ան ծրագրեց ֆոնտ հաստատել, որ սակայն չիրականացաւ, որովհետեւ վրայ հասաւ Համաշխարհային Ա. պատերազմը:

Պատերազմի բռնկումէն ետք ասպետ Վարդերես Վիեննա կը գտնուէր, երբ 1915 Յունուարին ռուսական բանակը մտաւ Պուլքովինա: Սուլալալ հիւզ - վեց շաբաթ մնաց ռուսական գաւառի տակ: Ռուսերու նահանջէն ետք ան վերադարձաւ Սուլալալ, ուր մահացաւ պատերազմի աւարտէնէն ետք, 1919ին:

ՓՐՈՒՆԳՈՒԼԵԱՆՆԵՐԸ՝ ՄԻՆՉԵՒ ՆԵՐԿԱՅ ԺԱՍՆԱԿՆԵՐԸ

Առաջին Աշխարհամարտէն եւ Աւստրիո-հունգարիոյ քայքայումէն ետք Փրունգուլեանները մեծ մասամբ մտան Ռուսաստանի թագաւորութեան կազմին մէջ: Բ. Աշխարհամարտէն ետք, 1947ին համայնապիղք վարչակարգ հաստատուեցաւ եւ Փրունգուլեաններուն հողերը բռնագրուեցան:

Սուլալալի եւ ընդհանուր առմամբ մոլտաւալալ հին գաղթօճախներու տկարացման եւ անշքացման պայմաններուն տակ անոնցմէ անտեր Պուլքերէն եւ այլ քաղաքներ ու երկիրներ տեղափոխուեցան: Երկար տարիներ Հաճկատարի վանքին պահպանման մնաց մօր կողմէն Փրունգուլեան տիկին էկատերինա Ֆոյթ, որ 1936ին իր ծախսով ջրհոր կառուցեց վանքին համար:

Փրունգուլեանները ուր որ գացին, հաւատարիմ մնացին իրենց արմատներուն, ամէն տարի Հաճկատարի վանքի ուխտագնացութիւններուն մասնակցելով եւ մատաղ բաժնեւորով: Անոնք կը մնան կապուած իրենց օրրան Սուլալալի, ուր կը գտնուի իրենց տոհմական դամբարան Ս. Յարութիւն մատուռը, որ պատական մեծ արժէք կը ներկայացնէ իր հայկական գեղեցիկ ոճով, գմբէթի գունաւոր քարերով (որոնք կը փայլիին արեւու ճառագայթներուն տակ) եւ թանկարժէք վարագոյրով, որուն վրայ պատկերուած են Գրիտտոսի Զարբանաց պատկերներ եւ կը գործածուին Աւազ Հինգշաբթի խաւարման գիշերը:

ԱՍՊԵՏ ՄԱՆՃԻԿԵԱՆ



Սուլալալի հայոց Հաճկատար Ս. Աստուածածնի վանքը

ԶԵՆՈՎԻՅԻ, ՖՈՔՇԱՆԻ ԵՒ ՊՈԹՈՆԵԱՆԻ ՄԷՋ

Փրունգուլեան գերդաստանէն ընտանիքներ ժամանակի ընթացքին տարածուեցան Սուլալալէն դուրս եւ տարբեր քաղաքներու մէջ բնակութիւն հաստատեցին:

Պուլքովին (ներկայ Ուլքարնիոյ սահմաններուն մէջ) Պուլքովինա երկրամասին մայրաքաղաքը դարձաւ աւստրիական տիրապետութեան հաստատումէն ետք եւ առևտրական կեդրոնի վերածուեցաւ, որուն պատճառով ալ բաւական թիւով հայեր եւ Փրունգուլեաններէն ընտանիքներ հոն գացին հաստատուեցան: Նշենք, որ անցեալին ստուար թիւով հայեր ապրած են Չեռնովիցի մէջ եւ երկու եկեղեցի ունեցած են: Հին գաղութը անշքացած էր 1740ական տարիներուն՝ իրերայալորդ պատերազմներու պատճառով: Ժ.թ. դարուն սկիզբը հոն կեդրոնացած հայերը քաղաքին կեդրոնական կերպարաններէն մէջ համախոսման բնակութիւն հաստատեցին, որուն գլխաւոր փողոցը կոչուեցաւ Հայկական:

Չեռնովիցի հայերը մեծ մասամբ կաթոլիկ դաւանանքը ընդունեցին գլխաւորաբար յիսուսեան կրօնաւորներու քարոզչութեան ընթացքով: Եւ երբ 1875ին հոն հայ կաթոլիկէ եկեղեցի կառուցուեցաւ առաջնորդ Ֆլորիան եպիսկոպոս Միխիթարի ջանքերով, Փրունգուլեանները մեծազուգում ընդհարատուութիւններ կատարեցին եւ մեծապէս օժանդակեցին եկեղեցիի կառուցման: Փրունգուլեան գերդաստանէն ընտանիք մը

